## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԹԱՆԵՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մենք և Սրբոց Հակոբյանց ամբողջ միաբանությունը խորունկ վշտով կհաղորդենք սրտի արատի պատճառով Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի հանկարծամահ ըլլալը, որ հանգյավ ի Տեր երեկ գիշեր:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ
19 նոյեմբեր 1956

---

### ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՀՈՐԴԱՆԱՆ

Դառն վշտով տեղեկացանք հանկարծակի մահվան մասին Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի: Մենք և Մայր Աթոռը խոր ցավով կմասնակցինք Սրբոց Հակոբյանց միաբանության սուգին և կաղոթենք առ մարդասերն Աստված, որ խաղաղությամբ ընդունի հանգուցյալի հոգին, որ հավատարիմ իր ուխտին անձնվիրաբար ծառայեց մեր Ս. Եկեղեցիին և Ս. Աթոռին: Թող Տերը լուսավորե հոգին և արժանի ընե զայն փառաց անթառամ պսակին:

Կիրակի, հետ պատարագի, Մայր Տաճարին մեջ կկատարվի հոգեհանգիստ հանգուցյալի հիշատակին:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
20 նոյեմբեր 1956

